

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

08 օգոստոսի, 2020 N 51

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 2
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **ո ղ ո շ ու մ ե մ**.

1. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի «Հավաքներ կամ հանրային միջոցառումներ իրականացնելու սահմանափակումների կիրառումն ապահովելու մասին» N 2 որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետության ողջ տարածքում կիրառել Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի հավելվածի 24-րդ կետով սահմանված սահմանափակումները հետևյալ հանրային միջոցառումների նկատմամբ՝

1) համերգներ, ցուցահանդեսներ, ցուցադրություններ, թատերական ներկայացումներ և սպորտային, մշակութային, կրթական այլ միջոցառումներ.

2) ժամանցային միջոցառումներ.

3) տոնական և հիշատակի միջոցառումներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումներ:

Սահմանել, որ բաց տարածքներում անցկացվող ծննդյան (տարեդարձի) և հարսանյաց (նշանադրության) միջոցառումները հանրային են համարվում 60-ից ավելի անձանց մասնակցության դեպքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ